ՄԻՔԱՅԵԼ ՉԱՄՉՅԱՆ

Գերդաստանը Պոլսում, դեռ շատ հնուց մեծ համբավ ու ճանաչում ուներ։ Միքայել Չամչյանի պապը ժամանակին հայտնի գրական-մշակութային գործիչ, հայկական մի քանի ընկերությունների պատվավոր անդամ, լեզվագետ և թարգմանիչ Հովակիմ Չամչյանն էր, որն ի դեպ, նյութապես սատար է հանդիսացել ժամանակի շատ հայ մտավորականների։ Միքայել Չամչյանի ազգականն էր հռչակավոր քիմիկոս, Պադուայի, Ճենովայի, Հռոմի թագավորական ակադեմիաների իսկական անդամ, Լոնդոնի թագավորական ընկերության, Պետերբուրգի կայսերական ակադեմիայի, Պրուսական գիտությունների ակադեմիայի արտասահմանյան պատվավոր դոկտոր Լուիջի Հակոբ Չամչյանը։ Նա, ում հայտնաբերած քիմիական երկու սինթեզները «Չամչյանի ռեակցիա» և «Չամչյանի վերախմբավորում» անունով շրջանառության մեջ են մինչև հիմա, ում անունով է այսօր կոչվում իտալական Տրիեստ քաղաքի փողոցներից մեկը և Բոլոնիայի քիմիական ինստիտուտը։ Միքայել Չամչյանի ավագ եղբայրն էր տոմարագետ, հայկական օրացույցներ կազմող Հակոբոս Չամչյանը, որի՝ այս կապակցությամբ կատարված հայկական տոմարի հետ առնչվող հաշվարկները իրենց նկատմամբ ուշադրությունը չեն կորցրել առ այսօր։ Եվ եթե ավելացնենք, որ Միքայել Չամչյանը նշանավոր հայագետ, երկու անուն պարբերականների խմբագիր, բանաստեղծ, իտալերենից և ֆրանսերենից հայերեն թարգմանիչ, հմուտ աշխարհագրագետ Ղուկաս Ինճիճյանի քրոջ որդին էր, ամեն ինչ արդեն հասկանալի կդառնա։

Եվ արդեն պարզ է, որ այսպիսի միջավայրում, 1738 թ. դեկտեմբերի 4-ին լույս աշխարհ եկած, ապա Պոլսի հայկական ազգային վարժարանում իր նախնական ուսումնառությունն ստացած Միքայել Չամչյանը, պետք է ժառանգեր այն ամեն լավագույնը, ինչին ականատես ու ականջալուր էր լինում նա։ Ընտանիքում, օրինակ, բացի մայրենիից, խոսակցական լեզու էր նաև ֆրանսերենը, թուրքերենն ու հունարենը և Չամչյանը դեռ փոքրուց տիրապետում էր այդ լեզուներին։ Հետագայում, Վենետիկի Սուրբ Ղազար կղզու Մխիթարյան վարժարանում սովորելու չորս տարիներին, եղածի վրա ավելացավ լատիներենը, իտալերենը, գերմաներենը, եբրայերենը, սանսկրիտը։ Մինչև 1769 թ., երբ Չամչյանը վարդապետ ձեռնադրվելով, պաշտոնապես դարձավ Վենետիկի համբավավոր Մխիթարյան միաբանության անդամ և իր գործունեությունը ծավալեց Բասրայի, ապա Բաղդադի հայկական հոգևոր համայնքներում, ինքնուս կերպով սովորեց նաև ասորերենը, պարսկերենը, արաբերենը։ Շուրջ տասնհինգ գործող ու դասական լեզուներ գիտեր Միքայել Չամչյանը, երբ սկսեց վարել Պոլսի հայկական համայնքի առաջնորդի իր պարտականությունները։ Այդ բազմազբաղ և աշխատատար պաշտոնում էլ նա վախճանվեց 1823 թ. հոկտեմբերի 30-ին, և թաղվեց քաղաքի հայկական Շիշլիի գերեզմանոցում։

Չամչյանի գիտական ժառանգությունն այնքան բազմակողմանի է, իսկ նրա ծավալած հայագիտական գործունեությունն այնքան եռանդալից, որ մի հոդվածի սահմաններում այն ընդգրկել անկարելի է։ Առաջին նշանավոր երկասիրությունը, որը լուրջ խոսակցություն բացեց իր մասին, նրա «Քերականութիւն հայկազեան լեզուի» շուրջ 800 էջանոց աշխատությունն էր, որը լույս աշխարհ եկավ Վենետիկում 1779 թ., և չնայած այն նախատեսված էր որպես դասագիրք «վասն ուսումնասեր համբակաց», և, ի դեպ, դասագրքի սկզբունքով էլ կազմված էր, բայց իր ընդգրկված փաստական նյութի և մանավանդ՝ հարուցած լեզվական-հասարակական

խնդիրների տեսակետից, շատ էր դուրս գալիս այդ համեստ նպատակներից։ Բավական է ասել միայն, որ մոտ մի դար առաջ, այսինքն՝ մինչև անցյալ դարի 80-ական թվականները, այս գիրքը մնաց որպես դպրոցական չգերազանցված դասագիրք և գրաբարի լեզվա-ոճական համակարգը քննող ամենահավաստի աղբյուրը։

Չամչյանի «Քերականության» պատմա-լեզվաբանական դերը պատկերացնելու համար պետք է նշենք, որ հայոց գրաբար լեզուն, սկսած 10-11-րդ դարերից, կայուն հետևողականությամբ անկում է ապրում։ Հռոմից Հայաստան առաքված և հայերենին վատ տիրապետած լատին քարոզիչները մի կողմից, որոնք լեզվի մեջ էին խցկել բազում լատիներեն ոճեր, հոլովաձևեր ու դարձվածքներ, գրաբարի՝ կատարելապետ անտեր վիճակը Թուրքիայում, – Օսմանյան կայսրությունը հասկանալի պատճառով չէր էլ մտահոգվում գրաբարով, առավել ևս նրա պաշտպանվածությամբ, - հիմնիվեր աղճատման էին հասցրել լեզուն, իջեցնելով նրան ամենաստորին վիճակին. մի վիճակ, որի ողբերգականությունը շատ էլ դժվար չէր պատկերացնել։

Մխիթար Սեբաստացին առաջինը եղավ, որ 1730 թ. հրատարակած իր «Քերականութիւն գրաբար լեզուի հայկազնեան սեռի» աշխատությամբ պայքարի դրոշ պարզեց լեզվական այդ աղավաղումների դեմ և, ի դեպ, ինչ-որ բանի էլ կարողացավ հասնել։ Բայց նրա աշխատանքը տառապում էր մեթոդաբանական բնույթի մի սխալով, որը Սեբաստացին թույլ էր տվել գիտակցաբար և որը մինչև վերջ էր չուղղեց։ Բանն այն էր, որ մաքրել գրաբարը լատինաբանություններից, որոնք տասնամյակների ընթացքում առատորեն լցրել էին նրա մեջ, – կնշանակեր կասկածանքի տեղիք տալ Հռոմին ու կաթոլիկ հավատի բարձրագույն օրենսդիր օրգանին՝ Կարդինալների խորհրդին և հետևաբար վտանգի տակ դնել այն միաբանության գոյությունը, որը մեծամեծ դժվարություններով հիմնել էր ինքը՝ Մխիթար Սեբաստացին։ Իսկ մաքրել լեզուն թուրքական բառարմատներից ու դարձվածքներից, կնշանակեր հարուցել Օսմանյան կայսրության ղեկավարների կասկածն ու անվստահությունը։ Հասարակական-քաղաքական առումով այս երկսայրի վիճակի առաջ Մխիթար Սեբաստացին ստիպված էր տեղի տալ։

Միքայել Չամչյանն իր «Քերականութիւնով» եկավ իր նախորդի հենց այդ սխալներն ուղղելու։ Այդ անելու համար թե՛ նպաստավոր էին հասարակական-քաղաքական պայմանները և թե՛ հեղինակը՝ Չամչյանը մեկն էր, որն իր բազմակողմանի պատրաստությամբ ու հարուստ գիտելիքներով բարձր էր կանգնած բոլորից։ Նա որոշակի համակարգի բերեց գրաբարի հոլովական համակարգը, խոնարհման կարգը դասավորելիս, դերանուններից դուրս թողեց Սեբաստացու ներբերած «Նա», «Նե», «Նու» ձևերը, գտնելով, որ դրանք «անհարազատ եւ խժաբարո իցեն» հայերենի համար, ստեղծեց հայերեն բառերի պատմահամեմատական ուսումնասիրության իր համակարգը, որը լեզվաբանական քննության է դիմանում անգամ այսօր և այլն։ Չմոռանանք, որ իր տեսակետներն ու մտքերը հավաստելու համար Չամչյանն օրինակներ էր բերում V-VII դարերի մեր դասականների գործերից, որով ավելի է արժեքավորվում աշխատությունը։ Փաստական այս հարուստ նյութի և հեղինակի՝ վերլուծական անառարկելի կարողությունների հետևանքով, Չամչյանի «Քերականութիւն հայկազեան լեզուի» աշխատությանը անօրինակ ճակատագիր վիճակվեց։ Բավական է ասել միայն, որ 1800-1850-

ական թվականների ժամանակահատվածում այն վերահրատարակվեց շուրջ տասնհինգ անգամ, և բացի Վենետիկից, որտեղ, ի դեպ, երեք վերահրատարակություն ունեցավ, – նաև Շուշիում, Մոսկվայում, Բաքվում և անգամ հեռավոր Կալկաթայում։

Միքայել Չամչյանի, ինչպես նաև ամբողջ հայ ժողովրդի համար բախտորոշ նշանակություն ունեցավ 1784 թվականը, երբ Վենետիկում լույս աշխարհ եկավ վիթխարի մի հատոր, որն ուներ շատ համեստ՝ «Պատմութիւն հայոց» վերնագիրը, և ապա՝ «Աշխատասիրութեամբ Միքայելի վարդապետի Չամչեան» մանրատառ նշումը։ Հետագա տարիներին հրատարակվեցին այդ աշխատության հաջորդ երկու հատորներն էլ, և այսպիսով հայ ժողովուրդն ունեցավ իր ամբողջ պատմությունը, սկսած հեթանոսական անգիր ժամանակներից մինչև 18-րդ դարի կեսերը։ Այդ եռահատորյակի համառոտագրությունը, մեկ հատոր ծավալով, հեղինակը հրատարակեց Վենետիկում 1824 թվականին։

Չամչյանի այս կոթողային աշխատության արժեքը պատկերացնելու համար նախ նշենք, որ այդպիսի ծավալով ու ընդգրկմամբ հայ ժողովրդի պատմությունը գրելու փորձ, նրանից առաջ արել էր միայն մի մարդ՝ քերթողահայր Մովսես Խորենացին։ Փաստն, ինչպես տեսնում ենք, համապատասխան մեկնաբանությունների կարիք չունի։ Իսկ այսպիսի լայնածավալ ընդգրկումը, նախ՝ պահանջում է տիտանական աշխատանք, ձեռքի տակ եղած մեծաքանակ աղբյուրների, հնօրյա ձեռագրերի, վավերագրերի, մեծ ու փոքր պատմական վկայությունների դեզի հիմնավոր և մանրակրկիտ քննություն, ճշմարիտը երկրորդականից զատել կարողանալու բանասիրական անուրանալի կարողություն։ Հայկական աղբյուրների այս քննությունը պետք է համադրվեր եվրոպական ու հունական համապատասխան աղբյուրների հետ քննադատաբար բաղդատելու հետ, իսկ սրա համար պատմաբան-բանասերի անուրանալի կարողությունները նա պետք է զուգակցեր մանրակրկիտ ուսումնասիրողի մեծ ձիրքի հետ։ Չմոռանանք, որ Չամչյանի ժամանակ դեռ հայտնաբերված չէին Սեբեոս պատմիչը, Ղևոնդ երեցը, Թովմա Արծրունին, Մովսես Կաղանկատվացին և հետևաբար նրանց շարադրած պատմական ժամանակահատվածի պակասը պետք է լրացվեր այլ աղբյուրների տվյալներով։ Եվ Չամչյանը հիացնող հմտությամբ կարողացել է հաղթահարել այս բոլոր դժվարությունները, երկասիրելով մի աշխատություն, որը պատմաբան Լեոյի վկայությամբ «իսկապես հռչակավոր դարագլուխ կազմող մի գրական գործ է»։

«Պատմութիւն հայոցի», ինչպես նաև նրա հեղինակի մեծ արժանիքներից մեկը պետք է համարել պատմական Հայաստանում տեղի ունեցած դեպքերի ու իրադարձությունների ժամանակագրական հաջորդականության ճշտումը։ Ինչպես հայտնի է, հայ պատմիչների ու հեղինակների անվիճելիորեն գերակշիռ մասը շատ էլ ուշադիր չի եղել այս հարցում, որի հետևանքով պատմական դեպքերի հետևառաջությունը խախտելը կամ այս հարցում բազում-բազմաթիվ կամայականություններ թույլ տալը սովորական երևույթ է եղել մեր նախնիների գործերում։ Արդ՝ նյութի մանրակրկիտ քննությունից արվող ժամանակագրական բնույթի եզրահանգումների, դրանք հին հունական, լատինական, հռոմեական համապատասխան բնույթի աղբյուրների հետ բաղդատելու հետևանքով կատարվող ճշտումներով, Չամչյանը կարողացել է ստեղծել ժամանակագրական ճշտված ու որոշակի համակարգ, հայ ժողովրդի ամբողջ հազար չորս հարյուր տարվա համար, որն իր թերություններով հանդերձ, այսօր էլ գիտական շրջանառության մեջ է մնում։ Այս բոլորի համամիասնությունն էր պատճառը, որ

Չամչյանի եռահատոր «Պատմութիւն հայոցը» երկար ժամանակ անվերապահ հեղինակություն էր մեր հայագիտական պատմաբանական գրականության բնագավառում, և անգամ այսօր, իր մի քանի վիճելի տեսակետներով հանդերձ, մնում է ուշադրության կենտրոնում։ Այդ նկատի ունենալով էլ, բոլորովին վերջերս եռահատորյակը վերահրատարակվեց Երևանում, Պետական Համալսարանի հրատարակությամբ, 1984-85 թթ.։

Չամչյանի «Պատմութիւն հայոցի» հիմնական թերությունը հասկանալու համար չպետք է մոռանալ, նախ՝ որ հեղինակը հոգևորական էր, այս հասկացողության ամենալայն իմաստով, և ապա՝ որ «Պատմութիւն հայոցը» ստեղծվել է այն ժամանակ, երբ դեռ իր լինելիության խանձարուրում էր գտնվում այն ուղղությունը, որը հետագայում պետք է ստանար «Պատմաքննական մեթոդ» անվանումը։ Այս էլ, ահա, նախորոշել է այն մեթոդաբանական թերությունը, որը հետագայում հարուցեց Մ. Նալբանդյանի դժգոհությունը։ Հավատարիմ մնալով այդ մեթոդաբանությանը, Չամչյանն իր «Պատմության» առաջին հատորում, օրինակ, միանգամայն լրջորեն քննում է այն հարցը, թե երբ եղավ համաշխարհային ջրհեղեղը (պատասխանում է. 1656 թ. նոյեմբերին, Քրիստոսի ծննդից առաջ), քանի տարեկան էր Նոյ նահապետն այն ժամանակ (պատասխանում է. «ի վեցհարիւրերորդ ամի կենաց իւրոց»), կամ որտեղ էր գտնվում Աստվածաշնչում հիշատակված դրախտը (պատասխանում է. պատմական Հայաստանում, Տիգրիս և Եփրատ գետերի միջև, Բինգյոլ լեռների շրջանում), կամ վերջապես, հանգամանալից քննությունից հետո պարզում է, թե Ադամը քանի տարեկանում ստեղծվեց և ապացուցում է, որ երիտասարդ հասակում, երբ շուրջ երեսուն տարեկան էր և այլն։ Հոգևորական դասին պատկանելուց և քննական մեթոդի պակասից է գալիս նաև Չամչյանի եռահատորյակի մյուս թերությունը։ Աստվածաշունչը նրա համար բացարձակ հեղինակություն է, նրա յուրաքանչյուր տառը լիակատար ճիշտ է ու ճշմարտացի և հայկական, հունա-հռոմեական, լատինական բոլոր և ամենաստույգ աղբյուրներն անգամ նա լրացնում ու ճշտում է ըստ Աստվածաշնչի հաղորդած տվյալների։ Դժվար չէ հասկանալը, որ այս դեպքում էլ առկա են ոչ քիչ թվով հիշատակություններ, որոնք այսօր միայն ծիծաղ են շարժում։

Կարելի է այս բնույթի մի քանի թերություններ էլ նշել, որոնք առկա են Չամչյանի՝ ինչպես «Պատմութիւն հայոց» աշխատության, այնպես էլ նրա մյուս գործերում, որոնք, սակայն, արդյունքն էին այն ժամանակի ու պայմանների, որի տարածքում ապրում ու գործում էր նա, որոնք այսօր արդեն հաղթահարված են խորհրդային առաջավոր գիտության ներկայացուցիչների կողմից։

Հաղորդվել է 1988 թ.,

«Արտասահմանյան հաղորդումների բաժնի» շրջանակներում